# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 15

Քաղաք Վարդենիս

08 ...01..... 2019թ

Գևորգ Գրիգորյան ՍՊԸ -ն, այսուհետև ՝՝Մատակարար՝՝, ի դեմս տնօրեն Գևորգ Գրիգորյանի, որը գործում է ըստ կանոնադրության մի կողմից, և ՝՝Վարդենիսի պոլիկլինիկա՝՝ ՊՓԲԸ-ն, այսուհետև "Գնորդ", ի դեմս տնօրեն Ա. Խլոյանի, որը գործում է ըստ կանոնադրության մյուս կողմից, կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով սահմանված պայմաններով Մատակարարը Գնորդին կմատակարարի շինարարական, տնտեսական նյութեր, առարկաներ, գրասենյակային պիտույքներ, գույք և պահեստամասեր (այսուհետև տեքստում՝՝ապրանք՝՝) ներկայացված պատվերով:

## 2. Մատակարարման պայմաններ

2.1Ապրանքի մատակարարումը կիրականացվի Գնորդի կողմից տրված պատվերի հիման վրա, որում պետք է նշվեն ապրանքի պնվանումը և քանակը:

2.2Մատակարարը պետք է ապրանքը մատակարարի պատվերը ստանալու պահից 2 օրվա ընթացքում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1.Մատակարարը իրավունք ունի.
Գնորդի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքները չընդունելու դեպքում հրաժարվել պայմանագիրը կատարելուց և Գնորդից պահանջել վճարելու վնասների փոխհատուցում:
3.2 Մատակարարը պարտավոր է
3.2.1 Գնորդին հանձնել պատշաճ տեսականու, քանակի և որակի ապրանք:
3.3 Գնորդն իրավունք ունի.
3.3.1 Մատակարարի կողմից անպատշաճ որակի կամ քանակի ապրանք մատակարարելու դեպքում պահանջել փոխարինել պատշաճ որակի կամ քանակի ապրանքով կամ հետ վերցնել ապրանքը:
3.4 Գնորդը պարտավոր է.
3.4.1 Ընդունել իր պատվերի համաձայն մատակարարված ապրանքը:
3.4.2 Ժամանակին և ամբողջությամբ վճարել Մատակարարից ստացված ապրանքի դիմաց:

## 4. Հաշվարկների կարգն և ձևը

4.1 Մատակարարված Ապրանքների դիմաց գնորդը վճարումները իրականացնում է Մատակարարի կողմից բաց թողնված ապրանքի հաշիվ ապրանքագրի հիման վրա, ապրանքը ստանալուց՝ մեկ ամսվա ընթացքում: